Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հուլիսի 03-ի «Գյումրի քաղաք, Կազաչի պոստ թաղամաս, 125 հասցեի բնակելի տանը կից գտնվող 57.06 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 57.06 քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի շինություններին համայնքի գույք գրանցելու նպատակով հասցե տրամադրելու մասին» №1685-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Նախաբանում՝ նախավերջին տողում
   «2023 թվականի հունիսի 26-ի №1601-Ա որոշումը» բառերը և թվերը փոխարինել «2023 թվականի հունիսի 26-ի №1601-Ա և 2024 թվականի մայիսի 23-ի №1549-Ա որոշումները» բառերով և թվերով:
2. Վերնագրում՝ 2-րդ տողում և որոշման կայացման մեջ՝ առաջին տողում «57.06» թիվը փոխարինել «133.53» թվով:
3. Որոշման կայացման մեջ՝ վերջին տողում «ՀՈՂԱՄԱՍ» բառը փոխարինել «ՇԻՆՈՒԹՅՈՒՆ» բառով:

Անդեմտեղծագործ

Կ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունվարի 2024 թվականի № 1653-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 52.31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0125-0004) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Կ. Հալաբյան փողոցի հարևանությամբ գտնվող 52.31 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0125-0004) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 12/5 հողամաս

Ղեկավար՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունվարի 2024 թվականի № 1652-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Կ. ՀԱԼԱԲՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ 42.31 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-0125-0004) ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի կողմից ներկայացված զեկուցագիրը, հողամասի հատակագիծը, տեղաբաշխման սխեման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Կ. Հալաբյան փողոցի հարևանությամբ գտնվող 42.31 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-0125-0004) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Կ. Հալաբյան փողոց, 12/6 հողամաս

Недействительная подпись

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հոկտեմբեր 2024 թվականի № 1651-Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԻՆՔՆԱԿԱՄ ԶԲԱՂԵՑՐԱԾ 72.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՊԱՏԿԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՈՒ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ 72.2 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 21-ի №1497-Ա որոշումը, հողամասի ու շինությունների հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաքի Պ. Սևակի փողոցի հարևանությամբ ինքնակամ զբաղեցրած 72.2 քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասին դրա վրա ինքնակամ կառուցված ու օրինական ճանաչված 72.2 քառակուսի մետր արտաքին մակերեսով շինությանը տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Պ. Սևակի փողոց, 8/14 շինություն

Недействительная подпись

x

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 թվականի N 1650-Ա

2023 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՏՐՎԱԾ N197/23 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արման Մարտիրոսյանին և Լիլիա Ավետիսյանին Գյումրի քաղաքի Կոմինտերնի փողոց 2-րդ շարք №11 և №11/1 հասցեներով հողամասերում բնակելի տան կառուցման համար 2023 թվականի նոյեմբերի 30-ին տրվել է N197/23 շինարարության թույլտվությունը: Ըստ շինարարության թույլտվության շինարարության տևողությունը սահմանվել է 6/վեց/ ամիս:

Սահմանված ժամկետում շինարարական աշխատանքները չեն ավարտվել, և կառուցապատողը դիմել է Գյումրի համայնքի ղեկավարին շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողությունը երկարաձգելու 4/չորս/ ամսով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 23-րդ հոդվածով, հիմք ընդունելով կառուցապատողի դիմումը և Գյումրու համայնքապետարանի կողմից ընդունված վարչական վարույթի արձանագրությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. 2023 թվականի նոյեմբերի 30-ին տրված N197/23 շինարարության թույլտվությամբ սահմանված շինարարության տևողության ժամկետը երկարաձգել 4/չորս/ ամսով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացուն պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

31.05.2024

Հ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» մայիսի 2024 **թվական** N 1649-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԵՐԳԵՅ ԱՐՄԱՆԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սերգեյ Արմանի Բաղդասարյանը (անձնագիր AL 0401289, տրված՝ 22.08.2023թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Վարդ Բաղ 1 մ/շ 4 թաղ. 5 շենք թիվ 28 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի մարտի 21-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ Բաղ 1 մ/շ 4 թաղ. 5 շենք թիվ 28 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 30-ի թիվ 869 որոշմամբ Գյումրի քաղաքի Վարդ-Բաղ 1 մ/շ 4 թաղամաս 5 շենք 28 բնակարանը հատկացվել է Արման Սերյոժայի Ոսկանյանի երեք անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային և տրվել թիվ 28 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 30-ի թիվ 869 որոշմամբ տրված թիվ 28 միասնական օրդերը, 2023 թվականի դեկտեմբերի 19-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 2306510651138 և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2024 թվականի մարտի 6-ի տեղեկանքները, Սերգեյ Արմանի Բաղդասարյանի, Էլյա Հրաչի Բաղդասարյանի անձնագրերի , Արման Սերյոժայի Ոսկանյանի նույնականացման քարտի պատճենները, Էլյա Հրաչի Բաղդասարյանի և Արման Սերյոժայի Ոսկանյանի հայտարարությունները Գյումրի համայնքից Վարդ-Բաղի 1 մ/շ 4 թաղամաս 5 շենք 28 հասցեի բնակարանը նվեր ընդունելու հրաժարվելու վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի մարտի 21-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով

ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ Սերգեյ Արմանի Բաղդասարյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք. Գյումրի Վարդ- բաղ 4 թաղամաս 5 շենք թիվ 28 հասցեի 64.85 (վաթսունչորս ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1145414 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Վարդ- Բաղ 1մ/շ 4 թաղամասի 5 շենք թիվ 28 հասցեի բնակարանը 2008 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2008 թվականի ապրիլի 30-ի թիվ 869 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Վարդ -Բաղի 1 մ/շ 4 թաղամաս 5 շենք 28 հասցեում հաշվառված են՝ Արման Սերյոժայի Ոսկանյանը 2008 թվականից, Էլյա Հրաչի Բաղդասարյանը 2008 թվականից, Սերգեյ Արմանի Բաղդասարյանը 2009 թվականից, Համլետ Արման Ոսկանյանը 2014 թվականից, Արմեն Անդրանիկի Հարությունյանը 2018 թվականից, Արման Հայկազի Հարությունյանը 2019 թվականից (հիմք՝ 2023 թվականի դեկտեմբերի 19-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 2306510651138 և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2024 թվականի մարտի 6-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ Արման Սերյոժայի Ոսկանյանի, Սերգեյ Արմանի Բաղդասարյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Քաղաքացի Էլյա Հրաչի Բաղդասարյանի անվամբ մարզ Արագածոտն համայնք Աշտարակ գյուղատնտեսական նշանակության հողամասերի, տնամերձ հողամասի և նկուղի, բնակելի տան, տնամերձ հողամասի և շինությունների նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի մարտի 29-ի N ԱՏ-29032024-99-0049, 2024 թվականի փետրվարի 9-ի N ԱՏ-09022024-99-0052 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Սերգեյ Արմանի Բաղդասարյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Վարդ Բաղ 1 մ/շ 4 թաղամաս 5 շենք թիվ 28 հասցեի բնակարանը վարձակալել է 2008 թվականի ապրիլի 30-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել

քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը Սերգեյ Արմանի Բաղդասարյանի դիմումը բավարարեց :

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ք. Գյումրի Վարդ- բաղ 4 թաղամաս 5 շենք թիվ 28 հասցեի 64.85 (վաթսունչորս ամբողջ ութսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Սերգեյ Արմանի Բաղդասարյանին ծնված՝ 2005 թվականին

որպես սեփականություն :

2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետակա գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Սերգեյ Արմանի Բաղդասարյանին :
3. Քաղաքացի՝ Սերգեյ Արմանի Բաղդասարյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սերգեյ Արմանի Բաղդասարյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 թվականի N 1648Ա

ՎԱՆՅԱ ԵԳՈՐԻ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՕԲՅԵԿՏ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքացի Վանյա Եգորի Մինասյանը մասնակցել է Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ու հողամասերի վարձակալության և կառուցապատման իրավունքի տրամադրման մրցութային հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 29-ին կայացած հողերի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթին և առաջարկելով լավագույն պայմաններ՝ հաղթող է ճանաչվել Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 12-ի N 90-Ա որոշմամբ առանձնացված, Գյումրի քաղաքի Կարսի խճուղի N 2/1 հասցեի 08-001-0247-0011 կադաստրային ծածկագրով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մրցույթում (արձանագրություն թիվ 24-02):

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և համաձայն Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 76-րդ հոդվածի 2-րդ մասի ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի «Պետական սեփականություն հանդիսացող հողամասերն օտարելու և օգտագործման տրամադրելու կարգը հաստատելու մասին» N 286 որոշմամբ հաստատված կարգի 8-րդ գլխի՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հաստատել Գյումրի համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ու հողամասերի վարձակալության և կառուցապատման իրավունքի տրամադրման մրցութային հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 29-ի թիվ 24-02 արձանագրությունը և Գյումրի քաղաքի Կարսի խճուղի N 2/1 հասցեի 1096,89 (մեկ հազար իննսունվեց ամբողջ ութսունինը հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը սպասարկման օբյեկտ կառուցելու նպատակով, 30 (երեսուն) տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրել տարեկան վարձավճար՝ 230000 /երկու հարյուր երեսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ), քաղաքացի Վանյա Եգորի Մինասյանին:
2. Սահմանված կարգով Վանյա Եգորի Մինասյանի հետ կնքել հողի կառուցապատման իրավունքի պայմանագիր (պատասխանատու՝ Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի առևտրի և սպասարկման ոլորտի համակարգման բաժին):
3. Պարտավորեցնել քաղաքացի Վանյա Եգորի Մինասյանին.
   1) համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ու մյուս նորմատիվ-իրավական փաստաթղթերի պահանջներին համաձայն, սեփական միջոցներով պատվիրել սպասարկման սրահ կառուցելու նախագծային փաստաթղթեր ու սահմանված կարգով ներկայացնել համաձայնեցման,
   2) օրենքով սահմանված կարգով ստանալ շինարարության թույլտվություն և նրա ավարտը ներկայացնել փաստագրման:
4. Հողի կառուցապատման իրավունքի պայմանագրի նոտարական վավերացման և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված ծախսերը կատարել քաղաքացի Վանյա Եգորի Մինասյանի միջոցների հաշվին:
5. Կառուցապատման իրավունքով տրամադրված հողամասն ըստ գործառնական նշանակության չօգտագործելու դեպքում կկիրառվեն օրենքով նախատեսված ներգործության միջոցներ, ընդհուպ սույն որոշման անվավեր ճանաչելը և հողամասը հետ վերցնելը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 թվականի N 1647 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՆԱՐ-ԴՈՍԻ ՓՈՂՈՑ N 6/1 ՀԱՍՑԵԻ 46,88 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ (36,97 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՆԵՐՔԻՆ) ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՊԱՐԻՍՊԸ, 186,58 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՐԻՆԵ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ, ՄՈՒՐԱԴ ՀՈՎՍԵՓԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՏՅՈՄ ՀՈՎՍԵՓԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց N 6/1 հասցեի 186,58 (մեկ հարյուր ութսունվեց ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասով բնակելի ավտոտնակը և պարիսպը հանդիսանում են համայնքային սեփականություն (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման N 08042024-08-0004 վկայական):

Նկատի ունենալով, որ նշված շինությունը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողերի վրա, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ բաժնի ,ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 16-ի N 109-Ա որոշումը, քաղաքացի Կարինե Հարությունյանի դիմումը՝ (մուտքագրված համայնքապետարանում 2023 թվականի մարտի հոկտեմբերի 31-ին N 23510 թվագրմամամբ՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց N 6/1 հասցեի հողամասում ինքնակամ կառուցված 46,88 (քառասունվեց ամբողջ ութսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր արտաքին (36,97 (երեսունվեց ամբողջ իննսունյոթ հարյուրերորդական)քառակուսի մետր ներքին) մակերեսով ավտոտնակը և պարիսպը 127748 (մեկ հարյուր քսանյոթ հազար յոթ հարյուր քառասունութ) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես ընդհանուր բաժնային սեփականություն, ուղղակի վաճառքի միջոցով օտարել տվյալ կառույցն իրականացրած քաղաքացիներ Կարինե Սուրենի Հարությունյանին, Մուրադ Հովսեփի Հարությունյանին և Արտյոմ Հովսեփի Հարությունյանին:
2. Գյումրի քաղաքի Նար-Դոսի փողոց N 6/1 հասցեի 186,58(մեկ հարյուր ութսունվեց ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասը, տվյալ հողամասի կադաստրային գնի չափով, որը կազմում է 10514 (տասը հազար հինգ հարյուր տասնչորս) Հայաստանի Հանրապետության դրամ 1.0 (մեկ) քառակուսի մետրի դիմաց, ընդամենը՝ 1961702 (մեկ միլիոն ինը հարյուր վաթսունմեկ հազար յոթ հարյուր երկու) Հայաստանի Հանրապետության դրամ, որպես ընդհանուր բաժնային սեփականություն, ուղղակի վաճառքի միջոցով օտարել քաղաքացիներ Կարինե Սուրենի Հարությունյանին, Մուրադ Հովսեփի Հարությունյանին և Արտյոմ Հովսեփի Հարությունյանին:
3. Գույքի օտարման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի որոշումը կայացնելուց հետո, քաղաքացիներ Կարինե, Մուրադ, Արտյոմ Հարությունյանները պարտավոր են 60 օրվա ընթացքում կատարել վճարումներ:
4. Առուվաճառքի հետ կապված պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման ծախսերը կատարել քաղաքացիներ Կարինե, Մուրադ և Արտյոմ Հարությունյանների միջոցների հաշվին:
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Կարինե, Մուրադ, Արտյոմ Հարությունյաններին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից:

03.06.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք.Գյումրի
2024 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 **թվական** N 1646-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԱՆԱՏՈԼԻԱ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ, ՄԱՐԻԱՄ ՊԱՐԳԵՎԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանը (անձնագիր՝ AL 0272927, տրված՝ 05.06.2023թ. 065-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Գարեգին Ա փողոց 8 շենք 12 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի ապրիլի 5-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 12 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի քաղսովետի գործկոմի որոշմամբ երկաթ-գծի ավան 83 շենք (ներկայիս Գարեգին Ա փողոց 8 շենք) թիվ 12 բնակարանը հատկացվել է Պարգև Հովհաննիսյանի 5 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, կնոջը, տղային, 2 աղջկան:

Քաղաքացիներ՝ Պարգև Եղիշի Հովհաննիսյանը և Վարդան Պարգև Հովհաննիսյանը մահացել են (հիմք՝ ԱԱ 065754, ԱԱ 040896 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի քաղսովետի գործկոմի որոշմամբ տրված թիվ 12 օրդերը, 2024 թվականի մարտի 29-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյա թիվ 240651065234, 2024 թվականի ապրիլի 3-ի «Ավրորա» համատիրության տեղեկանքները, Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2024 թվականի փետրվարի 28-ի եզրակացությունը, Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանի, Սուսաննա Պարգևի Վարդապետյանի, Մարիամ Պարգևի Հովհաննիսյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ
հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-

Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի ապրիլի 5-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 12 հասցեի 61.58 (վաթսունմեկ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 13052024-08-0027 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 12 բնակարանը 1966 թվականի ապրիլի 2-ից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի քաղսովետի գործկոմի որոշում):

գ) Շիրակ Գյումրի Գարեգին Ա փողոց 8 շենքի թիվ 12 հասցեում հաշվառված բնակվում են՝ Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանը 1967 թվականից,Եղիշե Պարգևի Հովհաննիսյանը 1991 թվականից, Մարինե Միսակի Հովհաննիսյանը 2002 թվականից, Գոհար Եղիշեի Հովհաննիսյանը 2011 թվականից, Պարգև Եղիշեի Հովհաննիսյանը 2024 թվականից (հիմք՝ 2024 թվականի մարտի 29-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ թիվ 240651065234 և 2024 թվականի ապրիլի 3-ի «Ավրորա» համատիրության տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ Սուսաննա Պարգևի Վարդապետյանի անվամբ Շիրակի մարզ քաղաք Գյումրի Խրիմյան Հայրիկ փողոց 48 շենք 10 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք, իսկ քաղաքացիներ՝ Մարիամ Պարգև Հովհաննիսյանի և Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ: Սուսաննա Պարգևի Վարդապետյանի կողմից ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է վերոնշյալ հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի մարտի 15-ի N US-15032024-99-0072 տեղեկանք):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Գարեգին Ա 8 շենքի և թիվ 12 բնակարանի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, շենքի կրող համակարգը գտնվում է բավարար վիճակում (հիմք՝ Սեդրակ Մուրադյան անհատական ձեռնարկության 2024 թվականի փետրվարի 28-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանի ընտանիքը Գարեգին Ա փողոց 8 շենքի թիվ 12 հասցեի բնակարանը վարձակալել է 1966 թվականի ապրիլի 2-ից այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝

օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի Սուսաննա Պարգևի Վարդապետյանի անվամբ Շիրակի մարզ քաղաք Գյումրի Խրիմյան Հայրիկ փողոց 48 շենք 10 բնակարան հասցեով անշարժ գույքի նկատմամբ գրանցված է

սեփականության իրավունք, Սուսաննա Պարգևի Վարդապետյանի կողմից ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է վերոնշյալ հասցեով անշարժ գույքի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանի դիմումը բավարարեց մասամբ:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Գարեգին Ա փողոց 8 շենք թիվ 12 հասցեի 61.58 (վաթսունմեկ ամբողջ հիսունութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանին ծնված՝ 1933 թվականին,
   2) Մարիամ Պարգևի Հովհաննիսյանին ծնված՝ 1958 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանին, Մարիամ Պարգևի Հովհաննիսյանին:
3. Քաղաքացիներ՝ Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանին, Մարիամ Պարգևի Հովհաննիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին ՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Անատոլիա Արտավազդի Հովհաննիսյանին, Մարիամ Պարգևի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 **թվականի** N 1695-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋԵՐՄՈՒԿԻ «ՕՓԵՆ» ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐԻՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԹԻՄԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՀՈԳԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետության Ջերմուկի «ՕՓԵՆ» շախմատի 2024 թվականի հունիսի 9–17-ը Ջերմուկ քաղաքում կայանալիք մրցաշարին Գյումրու հավաքական թիմի մասնակցությունը ապահովելու անհրաժեշտությունից, նկատի ունենալով շախմատի ֆեդերացիայի 2024 թվականի օրացուցային պլանը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Գյումրի համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 06-ի N119-Ն որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի 8-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 13-ի N692-Ն որոշման 1–ին կետի 1–ին ենթակետով հաստատված N1 հավելվածը, Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետի կողմից 2024 թվականի մայիսի 30-ին ներկայացված գրությունն ու նախահաշիվը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Ջերմուկի «ՕՓԵՆ» շախմատի մասնակցելու համար 2024 թվականի հունիսի 9–17-ը քաղաք Ջերմուկ գործուղել թվով 11 մարզիկի և 4 մարզիչի գործուղման ծախսերի համար հատկացնել 1.054.900(մեկ միլիոն հիսունչորս հազար իննը հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ–գլխավոր ֆինանսիստին՝ գործուղման ծախսերի հետ կապված գումարների վճարումները կատարել Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 8/1/1 գործառնական դասակարգման 4221 <<Ներքին գործուղումներ>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սյուն որոշումն ուժի մեջ է մտնում հավելվածում նշված անձանց պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Недействительная подпись

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

Հավելված

Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թ.
նոյեմբերի 03-ի N 1645-Ա որոշման

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Ջերմուկի «ՕՓԵՆ» շախմատի մրցաշարին **մասնակցող Գյումրու հավաքական թիմի անդամների**

Թիվ	Ազգանուն	Անուն	Մարզի/ մարզիչ	Անձնագիր	Հաշվեհամար	Գումար
1.	Քոչարյան Քոչարյան	Սոնա Արտուշ	մարզիկ ծնող	AV0257464	1570017983030100	77.700
2.	Քոչարյան Քոչարյան	Սամվել Արտուշ	մարզիկ ծնող	AV0257464	1570017983030100	77.700
3.	Պետրոսյան Հովհաննիսյան	Արտյոմ Թերմինե	մարզիկ ծնող	AT0622158	220372180012000	77.700
4.	Շահվալադյան Շահվալադյան	Սամվել Էդգար	մարզիկ ծնող	007746746	11802024286301	77.700
5.	Եղիկյան Եղիկյան	Նարեկ Գևորգ	մարզիկ ծնող	012627394	1570085631220100	77.700
6.	Երանոսյան	Ձոնիկ	մարզիկ	AS0330590	1570093550805500	77.700
7.	Ալեքսանյան Ալեքսանյան	Արեգ Մարիանա	մարզիկ ծնող	008810327	11800464381300	8.000
8.	Ալվանջյան	Աիդա	մարզիկ	AT0300698	1570091463804600	8.000
9.	Այվազյան Այվազյան	Աշոտ Կարեն	մարզիկ ծնող	005813175	1510039287780200	77.700
10.	Թորոյան Թորոյան	Թամարա Գևորգ	մարզիկ ծնող	006122352	16013074983300	77.700
11.	Վարդանյան	Արման	մարզիկ	AL 0246124	1570030239737500	77.700
12.	Գրիգորյան	Հայկ	մարզիչ	015821622	1510043477050100	84.900
13.	Քոչարյան	Արտուշ	մարզիչ	AV0257464	1570017983030100	84.900
14.	Գևորգյան	Մարինե	մարզիչ	AL 0576772	1570085278530100	84.900
15.	Շարյան	Եղիշե	մարզիչ	006083703	220060234675000	84.900
Ընդամենը						1.054.900

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 **թվական** N 1644-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀԱՍՄԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ ԺԱՄԱԿՈՉՅԱՆԻՆ, ՆԱՐԻՆԵ ԳԵՎՈՐԳԻ ԺԱՄԱԿՈՉՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանը (անձնագիր՝ AV 0681369, տրված՝ 21.03.2023թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Մանուշյան փող. 18ա շենք թիվ 49 բնակարան հասցեում (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի ապրիլի 22-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 49 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2001 թվականի հուլիսի 18-ի թիվ 430 որոշման համաձայն Գյումրի համայնքի Մանուշյան փողոց 18ա շենքի թիվ 49 բնակարանը հատկացվել է քաղաքացի Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանի վեց անձից բաղկացած ընտանիքին և տրվել թիվ 49 միասնական օրդերը:

Քաղաքացիներ՝ Լարիսա Գուրգեն Ժամակոչյանը և Գևորգ Ռաֆիկի Ժամակոչյանը մահացել են (հիմք՝ ԱԲ 207474 և VIII-ԻԿ No 846355 մահվան վկայականներ):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2001 թվականի հուլիսի 18-ի թիվ 430 որոշմամբ տրված թիվ 49 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ 2024 թվականի մարտի 20-ի թիվ 240168016175 տեղեկանքը, «Գյումրի Կենտրոն» համատիրության 2024 թվականի փետրվարի 28-ի տեղեկանքը, Վահրամ Ռաֆիկի Ժամակոչյանի դիմումը Գյումրի քաղաքի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 49 հասցեի բնակարանը նվեր ընդունելու հրաժարվելու վերաբերյալ, Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանի, Նարինե Գևորգի Ժամակոչյանի, Լարիսա Գևորգի Ժամակոչյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի ապրիլի 22-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրենց վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք. Գյումրի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 49 հասցեի 78.95 (յոթանասունութ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1132702 վկայական):

բ) Գյումրի համայնքի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 49 հասցեի բնակարանը 2001 թվականի հուլիսի 18-ից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2001 թվականի հուլիսի 18-ի թիվ 430 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 49 հասցեում հաշվառված են՝ Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանը 2009 թվականից, Լարիսա Գևորգի Ժամակոչյանը 2011թվականից , բնակվում են՝ Նարինե Գևորգի Ժամակոչյանը և Լարիսա Գևորգի Ժամակոչյանը (հիմք՝2024 թվականի մարտի 20-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշված անձանց վերաբերյալ թիվ 240168016175 և «Գյումրի Կենտրոն» համատիրության 2024թվականի փետրվարի 28-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանի և Նարինե Գևորգի Ժամակոչյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, նրա կողմից 1998թ.մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ:Քաղաքացի Լարիսա Գևորգի Ժամակոչյանի անվամբ Երևան Կենտրոն Ս.Զավարյան փողոց 57/19 շենք 157/5 տարածքի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: Նրա կողմից 1998թ.մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է վերոնշյալ հասցեի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի ապրիլի 3-ի-ի N US-03042024-99-0073, N US-03042024-99-0076, 2024 թվականի ապրիլի 17-ի-ի N US-17042024-99-0322 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանի ընտանիքը Գյումրի համայնքի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 49 հասցեի բնակարանը վարձակալել է 2001 թվականի հուլիսի 18-ից այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվելքաղաքացիների,իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և(կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի Լարիսա Գևորգի Ժամակոչյանի անվամբ Երևան Կենտրոն Ս.Զավարյան փողոց 57/19 շենք 157/5 տարածքի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք: Նրա կողմից 1998թ.մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է վերոնշյալ հասցեի նկատմամբ

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է

Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանի դիմումը բավարարեց մասամբ:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ք. Գյումրի Մանուշյան փողոց 18ա շենք թիվ 49 հասցեի 78.95 (յոթանասունութ ամբողջ իննսունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանին ծնված՝ 1972 թվականին,
   2) Նարինե Գևորգի Ժամակոչյանին ծնված՝ 1992 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն :
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանին, Նարինե Գևորգի Ժամակոչյանին :
3. Քաղաքացիներ՝ Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանին, Նարինե Գևորգի Ժամակոչյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Հասմիկ Գուրգենի Ժամակոչյանին, Նարինե Գևորգի Ժամակոչյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 **թվականի** N 1643-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 982-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մարտի 29-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյաւմրի համայնքի Սևյան փողոց 3-րդ նրբանցք հասցեի հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրելու մասին» N 982-Ա որոշման (այսուհետ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումը.
   1) որոշման 1-ին կետում «ավտոտնակի» բառից հետո լրացնել «, 336,25 (երեք հարյուր երեսունվեց ամբողջ քսանհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով կիսակառույցի, 2,5 (երկու ամբողջ հինգ տասնորդական) քառակուսի մետր մակերեսով պարսպի և դրանց» թվերն ու բառերը:

03.06.2024

Հ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 **թվական** N 1642-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ՝ ՎՈԼՈԴՅԱ ԴԱՎԻԹԻ ՆԻԿՈՅԱՆԻ ԵՎ ԼՅՈՒԴՄԻԼԱ ԳԵՎՈՐԳԻ ՋՐԱՂԱՑՊԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Վոլոդյա Դավիթի Նիկոյանը (անձնագիր AL 0449722, տրված՝ 03.10.2023թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Վարդ-Բաղի 2թ/ղ 1մ/շ 5շենք, 1 բնակարան հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի մարտի 20-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Վարդ- Բաղ 1մ/շ 2 թաղ. 5 շենք թիվ 1 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 3-ի թիվ 1304 որոշմամբ Գյումրի քաղաքի Վարդ բաղ 1մ/շ 2 թաղամաս 5 շենք 1 բնակարանը բնակտարածության օգտագործման իրավունքով թույլատրվել է բնակվելու Լյուդմիլա Գևորգի Ջրաղացպանյանի 3 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, ամուսնուն, տղային:

Քաղաքացի՝ Դավիթ Վոլոդյա Նիկոյանը մահացել է (հիմք՝ ԱԲ 275335 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 3-ի թիվ 1304 որոշմամբ տրված թիվ 1 միասնական օրդերը, 2024 թվականի մարտի 15-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 240168016158 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2024 թվականի մարտի 15-ի N 471 տեղեկանքները, Վոլոդյա Դավիթի Նիկոյանի, Լյուդմիլա Գևորգի Ջրաղացպանյանի անձնագրերի պատճենները:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի մարտի 20-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են դիմումատուի՝ քաղաքացի Վոլոդյա Դավիթի Նիկոյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Ք. Գյումրի Վարդ- բաղ 2թաղ. 5 շենք թիվ 1 հասցեի 63.61 (վաթսուներեք ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1148319 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Վարդ- Բաղ 1մ/շ 2 թաղ. 5 շենք թիվ 1 հասցեի բնակարանը 2008 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Գյումրու քաղաքապետի 2008 թվականի հուլիսի 3-ի թիվ 1304 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Վարդ- Բաղի 1մ/շ 2թաղամաս 5 շենք 1 հասցեում հաշվառված բնակվում են՝ Լյուդմիլա Գևորգի Ջրաղացպանյանը 2008 թվականից, Վոլոդյա Դավիթի Նիկոյանը 2012 թվականից (հիմք՝ 2024 թվականի մարտի 15-ի ՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 240168016158 և «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2024 թվականի մարտի 15-ի N 471 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամաբ ՀՀ տարածքում քաղաքացի Լյուդմիլա Գևորգի Ջրաղացպանյանի և Վոլոդյա Դավիթի Նիկոյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր նրա կողմից անշարժ գույքի օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է մարզ Շիրակ քաղաք Գյումրի Պ.Սևակի փողոց 12ա շենք 2 բնակարանի նկատմամբ, իսկ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի մարտի 19-ի N US-19032024-99-0075, N US-19032024-99-0420 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Վոլոդյա Դավիթի Նիկոյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Վարդ- Բաղ 2 թաղամաս 1մ/շ 5 շենք թիվ 1 հասցեի բնակարանը վարձակալել է 2008 թվականի հուլիսի 3-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններիր մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով՝ վարչական մարմինը վերոնշյալ հասցեի բնակարանը Վոլոդյա Դավիթի Նիկոյանի ընտանիքին տրամադրեց վարձակալական հիմունքներով:

2. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Քաղաքացիներ՝
   1) Վոլոդյա Դավիթի Նիկոյանի ծնված՝ 1992 թվականին,
   2) Լյուդմիլա Գևորգի Ջրաղացպանյանի ծնված՝ 1951 թվականին

   հետ կնքել Գյումրի համայնքի Վարդ- բաղ 2 թաղամաս 5 շենք թիվ 1 հասցեի 63.61 (վաթսուներեք ամբողջ վաթսունմեկ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանի վարձակալության պայմանագիր անորոշ ժամկետով, ամսական 636.10 (վեց հարյուր երեսունվեց դրամ, տաս լումա) Հայաստանի Հանրապետության դրամ վարձավճարով:
2. Վարձակալության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Վոլոդյա Դավիթի Նիկոյանին, Լյուդմիլա Գևորգի Ջրաղացպանյանին:

3. Քաղաքացիներ՝ Վոլոդյա Դավիթի Նիկոյանին, Լյուդմիլա Գևորգի Ջրաղացպանյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Վոլոդյա Դավիթի Նիկոյանին, Լյուդմիլա Գևորգի Ջրաղացպանյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 **թվական** N 1641-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐՏԱԿ ՌՈՒԴԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ, ԳԱՅԱՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ, ՌՈՒԴԻԿ ԱՐՏԱԿԻ ԴԱՎԹՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Ռիմա Բենիամինի Կոշտոյանը (նույնականացման քարտ՝ 005316906, տրված՝ 29.08.2014թ. 034-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Տ.Մեծ 27/3 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Արտակ Ռուդիկի Դավթյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի մայիսի 30-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Նիզամու փողոց 29/3 հասցեի բնակելի տան կասեցված նվիրատվության գործընթացը վերսկսել:

Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Քաղաքացիներ՝ Արտակ Ռուդիկի Դավթյանի, Գայանե Ռազմիկի Դավթյանի, Ռուդիկ Արտակի Դավթյանի, Արմենուհի Արտակի Դավթյանի,Գնել Նշանի Մուրադյանի, Անահիտ Նշանի Մուրադյանի հետ բնակելի տարածության օգտագործման վարձակալության պայմանագիր կնքելու մասին» թիվ 2067-Ա որոշմամբ կնքվել է ք. Գյումրի Նիզամու փողոց 29/3 հասցեի 62.26 (վաթսուներկու ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տան, բնակելի տան պահպանման և սպասարկման համար փաստացի զբաղեցրած 82.34 (ութսուներկու ամբողջ երեսունչորս հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով հողամասի վարձակալության պայմանագիր անորոշ ժամկետով, որն ստացել է նոտարական վավերացում և պետական գրանցում (հիմք՝ 05.02.2016թ. №2442 վարձակալության պայմանագիր և անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման № 13102022-08-0032 վարձակալության վկայական):

Դիմումին կից ներկայացվել է № 13102022-08-0032 վարձակալության վկայականի պատճենը, 2022 թվականի հոկտեմբերի 5-ի №2442 վարձակալության պայմանագրի պատճենը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2024 թվականի ապրիլի 10-ի N 240651065264 տեղեկանքը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2024 թվականի ապրիլի 22-ի N 746 տեղեկանքը, Արտակ Ռուդիկի Դավթյանի, Գայանե Ռազմիկի Դավթյանի, Ռուդիկ Արտակի Դավթյանի անձնագրերի, Արմենուհի Արտակի Դավթյանի նույնականացման քարտի ,Գնել Նշանի Մուրադյանի, Անահիտ Նշանի Մուրադյանի ծննդյան վկայականների պատճենները, Մուրադ Տիգրանյան անհատական

ձեռնարկության 2023 թվականի դեկտեմբերի 6-ի եզրակացությունը, գույքի վարձակալության մուծման անդորրագրերը, Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 2067-Ա որոշման պատճենը, Արմենուհի Արտակի Դավթյանի, իր և Նշան Մուշեղի Մուրադյանի անչափահաս երեխաներ՝ Գնել Նշանի Մուրադյանի, Անահիտ Նշանի Մուրադյանի անունից հրաժարվել են Գյումրի համայնքից նվեր ընդունել ք. Գյումրի Նիզամու փողոց 29/3 հասցեի բնակարանը, Արտակ Ռուդիկի Դավթյանի, Գայանե Ռազմիկի Դավթյանի, Ռուդիկ Արտակի Դավթյանի լիազորագիրը Գյումրի հանայնքից Նիզամու փողոց 29/3 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-
րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2023 թվականի մայիսի 30-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Արտակ Ռուդիկի Դավթյանի լիազորված անձ՝ Շուշանիկ Աշոտի Հարությունյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները :

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Նիզամու փողոց 29/3 հասցեի 62.26 (վաթսուներկու ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 01072015-08-0008 վկայական):

բ) Շիրակ Գյումրի Նորավան փողոց 29 շենք թիվ 3 հասցեում հաշվառված բնակվում են՝ Արտակ Ռուդիկի Դավթյանը 2011 թվականից, Ռուդիկ Արտակի Դավթյանը 2019 թվականից, Գայանե Ռազմիկի Դավթյանը 2011 թվականից, Անահիտ Նշանի Մուրադյանը 2011 թվականից, Գնել Նշանի Մուրադյանը 2011 թվականից (հիմք՝ 2024թվականի ապրիլի 10-ի բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ N 240651065264, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2024 թվականի ապրիլի 22-ի N 746 տեղեկանքներ):

գ) Ռուդիկ Արտակի Դավթյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Արտակ Ռուդիկի Դավթյանի, Գայանե Ռազմիկի Դավթյանի անվամբ Շիրակի մարզ համայնք Արթիկ գյուղ Մեծ Մանթաշ 08-079-0235-0007, 08-079-0214-0106, 08-079-0259-0043 կադաստրային ծածկագրերով գյուղատնտեսական նշանակության հողամասերի նկատմամբ գրանցված է ընդհանուր համատեղ սեփականության իրավունք, վերոնշյալ քաղաքացիների անվամբ քաղաք Գյումրի Նիզամու փողոց 29/3 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի միավորների նկատմամբ գրանցված է վարձակալության իրավունք,1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի ապրիլի 10-ի N ԱՏ-10042024-99-0398 տեղեկանք):

դ) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Նիզամի փողոց թիվ 29/3 բնակելի տան վնասվածությունը գնահատվում երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար, այն է՝

պահանջվում է կատարել տան հարդարանքի նորոգում՝ վնասված տարրերի վերականգնումով (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2023 թվականի դեկտեմբերի 6-ի եզրակացություն):

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության

բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Արտակ Ռուդիկի Դավթյանի լիազորված անձ՝ Ռիմա Բենիամինի Կոշտոյանի դիմումը բավարարեց:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 9-րդ հոդվածների, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-րդ հոդվածի 2-րդ մասի «բ» կետի, 54-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ

1. Չեղյալ համարել Գյումրի համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 9-ի «Քաղաքացիներ Արտակ Ռուդիկի Դավթյանի, Գայանե Ռազմիկի Դավթյանի, Ռուդիկ Արտակի Դավթյանի, Արմենուհի Արտակի Դավթյանի,Գնել Նշանի Մուրադյանի, Անահիտ Նշանի Մուրադյանի հետ Գյումրի համայնքի Նիզամու փողոց 29/3 հասցեի բնակելի տան վաճառակալության պայմանագիր կնքելու մասին» N 2067-Ա որոշումը:

2. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Նիզամու փողոց 29/3 հասցեի 62.26 (վաթսուներկու ամբողջ քսանվեց հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝

1) Արտակ Ռուդիկի Դավթյանին ծնված՝ 1962 թվականին,
2) Գայանե Ռազմիկի Դավթյանին ծնված՝ 1964 թվականին,
3) Ռուդիկ Արտակի Դավթյանին ծնված՝ 1998 թվականին

որպես ընդհանուր բաժնային սեփականություն :

3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Արտակ Ռուդիկի Դավթյանին, Գայանե Ռազմիկի Դավթյանին, Ռուդիկ Արտակի Դավթյանին :
4. Քաղաքացիներ՝ Արտակ Ռուդիկի Դավթյանին, Գայանե Ռազմիկի Դավթյանին, Ռուդիկ Արտակի Դավթյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին ՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Արտակ Ռուդիկի Դավթյանին, Գայանե Ռազմիկի Դավթյանին, Ռուդիկ Արտակի Դավթյանին պատշաճ կարգով իրազեկման հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» հունիսի 2024 **թվական** N 1642Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԿԱՐԱՊԵՏ ԹՈՐԳՈՄԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ,ԹՈՐԳՈՄ ՀՐԱՉԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ, ՍԵԴԱ ԹՈՐԳՈՄԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ,ԿԱՐԻՆԵ ԹՈՐԳՈՄԻ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Կարապետ Թորգոմի Սահակյանը (անձնագիր՝ AT 0362544, տրված՝ 21.01.2020թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի Անի թաղ.9փ.1 շենք 3 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի մայիսի 14-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Անի թաղամաս 9 փողոց 1 շենք թիվ 3 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի հուլիսի 26-ի թիվ 13 որոշմամբ Անի թաղամաս 9 փողոց 1 շենքի թիվ 3 բնակարանը հատկացվել է Թորգոմ Հրաչի Սահակյանի 5 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, հորը, տղային, 2 աղջկան:

Քաղաքացի՝ Հրաչ Վառլամի Սահակյանը մահացել է (հիմք՝ ԲԱ 812071 մահվան վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի հուլիսի 26-ի թիվ 13 որոշմամբ տրված թիվ 3 միասնական օրդերը , բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2024 թվականի մայիսի 12-ի թիվ 240169016031 տեղեկանքը, «Նոր Անի» համատիրության 2024 թվականի մայիսի 7-ի N «01» 001 տեղեկանքը, Կարապետ Թորգոմի Սահակյանի, Սեդա Թորգոմի Սահակյանի, Կարինե Թորգոմի Սահակյանի անձնագրերի պատճենները, Թորգոմ Հրաչի Սահակյանի նույնականացման քարտի պատճենը, Կարապետ Թորգոմի Սահակյանի լիազորագիրը Գյումրի համայնքից Անի թաղամաս 9 փողոց 1 շենք թիվ 3 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-

Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի մայիսի 14-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Կարապետ Թորգոմի Սահակյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Անի թաղամաս 9 փողոց 1 շենք թիվ 3 հասցեի 80.73 (ութսուն ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1063270 վկայական):

բ) Անի թաղամաս 9 փողոց 1 շենք թիվ 3 հասցեի բնակարանը 1990 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի Մոսկովյան շրջանային սովետի գործադիր կոմիտեի 1990 թվականի հուլիսի 26-ի թիվ 13 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Անի թաղ. 9 փողոց 1 շենք թիվ 3 հասցեում հաշվառված բնակվում են՝ Թորգոմ Հրաչի Սահակյանը 1990 թվականից, Մարինե Իսկանդարի Սահակյանը 2004 թվականից, Կարապետ Թորգոմի Սահակյանը 2008 թվականից, Սուսաննա Կարապետի Սահակյանը 2011 թվականից, Հրաչ Կարապետի Սահակյանը 2011 թվականից, Թորգոմ Կարապետի Սահակյանը 2013 թվականից (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2024 թվականի մայիսի 12-ի թիվ 240169016031 տեղեկանք , «Նոր Անի» համատիրության 2024 թվականի մայիսի 7-ի N «01» 001 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ ՝ Թորգոմ Հրաչի Սահակյանի, Կարապետ Թորգոմի Սահակյանի, Կարինե Թորգոմի Սահակյանի, Սեդա Թորգոմի Սահակյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ և նրանց կողմից 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ:Կարինե Թորգոմի Սահակյանի կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Կատովսկու փողոց 31 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2024 թվականի մայիսի 13-ի N US-13052024-99-0336, N US-13052024-99-0339, N US-13052024-99-0338, 2024 թվականի մարտի 14-ի N US-14032024-99-0491 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Կարապետ Թորգոմի Սահակյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Անի թաղամաս 9 փողոց 1 շենք թիվ 3 հասցեի բնակարանը վարձակալել է 1990 թվականի հուլիսի 26-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց

գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացի՝ Կարինե Թորգոմի Սահակյանի կողմից կնքված անշարժ գույքի ձեռքբերման և միաժամանակ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարվել է մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Կատովսկու փողոց 31 բնակելի տուն հասցեով անշարժ գույքի նկատմամբ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն

ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի՝ Կարապետ Թորգոմի Սահակյանը դիմումը բավարարեց մասամբ :

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Անի թաղամաս 9 փողոց 1 շենք թիվ 3 հասցեի 80.73 (ութսուն ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացիներ՝
   1) Կարապետ Թորգոմի Սահակյանին ծնված՝ 1974 թվականին,
   2) Թորգոմ Հրաչի Սահակյանին ծնված՝ 1952 թվականին,
   3) Սեդա Թորգոմի Սահակյանին ծնված՝ 1985 թվականին,
   4) Կարինե Թորգոմի Սահակյանին ծնված՝ 1976 թվականին

   որպես ընդհանուր բաժնային սեփականություն հավասար բաժիններով:
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացիներ՝ Կարապետ Թորգոմի Սահակյանին,Թորգոմ Հրաչի Սահակյանին, Սեդա Թորգոմի Սահակյանին, Կարինե Թորգոմի Սահակյանին :
4. Քաղաքացիներ՝ Կարապետ Թորգոմի Սահակյանին, Թորգոմ Հրաչի Սահակյանին, Սեդա Թորգոմի Սահակյանին, Կարինե Թորգոմի Սահակյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ՝ Կարապետ Թորգոմի Սահակյանին, Թորգոմ Հրաչի Սահակյանին, Սեդա Թորգոմի Սահակյանին, Կարինե Թորգոմի Սահակյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» հունվար 2024 **թվական** N 1639-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԳՈՀԱՐ ՀՄԱՅԱԿԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Վարդուհի Դավիթի Գևորգյանը (նույնականացման քարտ՝ 010656049, տրված՝ 24.01.2019թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի Անի թաղ. 13փող. 13 շենք 8 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս քաղաքացիներ՝ Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանի, Գոհար Հմայակի Մարտիրոսյանի, Դանիել Ամրաստանի Միքայելյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի մայիսի 7-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Անի թաղամաս 13 փողոց 13 շենք թիվ 8 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանին, Գոհար Հմայակի Մարտիրոսյանին,Դանիել Ամրաստանի Միքայելյանին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Լենինականի շրջանային սովետի 1992 թվականի օգոստոսի 6-ի թիվ 8/2 որոշմամբ 13 փողոց 13 շենքի թիվ 8 բնակարանը հատկացվել է Գոհար Հմայակի Մարտիրոսյանի 3 անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, 2 տղային և տրվել թիվ 8 միասնական օրդերը:

Դիմումին կից ներկայացվել է Լենինականի շրջանային սովետի 1992 թվականի օգոստոսի 6-ի թիվ 8/2 որոշմամբ տրված թիվ 8 միասնական օրդերը, ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Գյումրի 3 բաժնի 2024 թվականի ապրիլի 19-ի N 94/21 գրությունը, «Բարեկամություն» համատիրության 2024 թվականի փետրվարի 16-ի N 0/25 տեղեկանքը, Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանի, Գոհար Հմայակի Մարտիրոսյանի, Դանիել Ամրաստանի Միքայելյանի լիազորագրերը Գյումրի հանայնքից Անի թաղամաս 13 փողոց 13 շենք թիվ 8 հասցեի բնակարանի համապատասխան բաժնեմասերի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին, «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2024 թվականի մարտի 12-ի Շ-645/91 գրությունը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի

Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի մայիսի 7-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացիներ՝ Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանի, Գոհար Հմայակի Մարտիրոսյանի, Դանիել Ամրաստանի Միքայելյանի լիազորված անձ՝ Վարդուհի Դավիթի Գևորգյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Անի թաղամասի 13-րդ փողոց 13 շենք, թիվ 8 հասցեի 68.2 (վաթսունութ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 23052024-08-0057 վկայական) :

բ) Գյումրի համայնքի 13 փողոց 13 շենք թիվ 8 հասցեի բնակարանը 1992 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Լենինականի շրջանային սովետի 1992 թվականի օգոստոսի 6-ի թիվ 8/2 որոշում):

գ) Ք. Գյումրի Անի թաղամաս 13 փողոց 13 շենք 8 հասցեում հաշվառված են՝ Վարդուհի Դավիթի Գևորգյանը 2010 թվականից, Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանը 1992 թվականից, Գոհար Հմայակի Մարտիրոսյանը 1992 թվականից, Դանիել Ամրաստանի Միքայելյանը 2000 թվականից, Սյուզաննա Ռաֆայելի Միքայելյանը 2012 թվականից, Ամրաստան Ռաֆայելի Միքայելյանը 2010 թվականից, Գոհար Ռաֆայելի Միքայելյանը 2013 թվականից, բնակվում է 3 անձ (հիմք՝ ՀՀ ՆԳՆ ՄՔԾ Գյումրի 3 բաժնի 2024 թվականի ապրիլի 19-ի N 94/21 գրություն, «Բարեկամություն» համատիրության 2024 թվականի փետրվարի 16-ի N 0/25 տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանի, Գոհար Հմայակի Մարտիրոսյանի, Դանիել Ամրաստանի Միքայելյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: 1998թ.-ի մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից կնքված անշարժ գույքի նկատմամբ օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում ՀՀ տարածքում կատարված չէ (հիմք՝ (հիմք՝ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2024 թվականի փետրվարի 26-ի N ԱՏ-26022024-99-0022 տեղեկանք):

ե) Քաղաքացիներ՝ Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանի, Գոհար Հմայակի Մարտիրոսյանի, Դանիել Ամրաստանի Միքայելյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Անի թաղ. 13-րդ փողոց 13 շենք թիվ 8 հասցեի բնակարանը վարձակալել է 1992 թվականի օգոստոսի 6-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Քաղաքացիներ՝ Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանը և Դանիել Ամրաստանի Միքայելյանը հանդիսանում են ՌԴ քաղաքացիներ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության

իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացիներ՝ Ռաֆայել Ամրաստանի Միքայելյանի, Գոհար Հմայակի Մարտիրոսյանի, Դանիել Ամրաստանի Միքայելյանի լիազորված անձ՝ Վարդուհի Դավիթի Գևորգյանի դիմումը բավարարեց մասամբ:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Անի թաղամասի 13-րդ փողոց 13 շենք, թիվ 8 հասցեի 68.2 (վաթսունութ ամբողջ երկու տասնորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Գոհար Հմայակի Մարտիրոսյանին ծնված՝ 1941 թվականին

   որպես սեփականություն :
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Գոհար Հմայակի Մարտիրոսյանին:
3. Քաղաքացի՝ Գոհար Հմայակի Մարտիրոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Գոհար Հմայակի Մարտիրոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունվարի 2024 **թվական** N 1638-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանը (անձնագիր՝ AS 0536517, տրված՝ 04.02.2019թ. 016-ի կողմից, հաշվառված՝ ք. Գյումրի, Տ.Ճարտարապետի 16ա շենք 1 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի ապրիլի 1-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով ք. Գյումրի Տ.Ճարտարապետի փողոց 16ա շենք թիվ 1 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Կումայրիի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 2-ի թիվ 8 որոշմամբ Տրդատ Ճարտարապետի 16ա շենք թիվ 1 հասցեի բնակարանը հատկացվել է Մարիամ Մամիկոնի Հովհաննիսյանի երեք անձից բաղկացած ընտանիքին՝ իրեն, տղային, աղջկան:

Քաղաքացի՝ Մարիամ Մամիկոնի Հովհաննիսյանը մահացել է (հիմք՝ ԲԱ 853227 վկայական):

Դիմումին կից ներկայացվել է Կումայրիի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 2-ի թիվ 8 որոշմամբ տրված թիվ 1 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2024 թվականի մարտի 18-ի թիվ 240168016167, 2024 թվականի մարտի 21-ի «Բարեկամություն» համատիրության N 0/36 տեղեկանքները, Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանի, Հասմիկ Ալեքսանի Հակոբյանի, Մարիամ Մամիկոնի Հովհաննիսյանի անձնագրերի պատճենները, Հասմիկ Ալեքսանի Հակոբյանի հայտարարությունը Գյումրի համայնքից Տրդատ Ճարտարապետի փողոց 16ա շենք թիվ 1 հասցեի բնակարանը նվեր ընդունելու հրաժարվելու վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի ապրիլի 1-ին հարուցվել է

վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Տ. Ճարտարապետի փողոց 16ա շենք, թիվ 1 հասցեի 79.18 (յոթանասունինները ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ N 08042024-08-0003 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Տրդատ Ճարտարապետի փողոց 16ա շենք թիվ 1 հասցեի բնակարանը 1991 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Կումայրիի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 2-ի թիվ 8 որոշում):

գ) Շիրակ Գյումրի Տրդատ Ճարտարապետի փողոց 16ա շենք թիվ 1 հասցեում հաշվառված են քաղաքացիներ՝ Մարիամ Մամիկոնի Հովհաննիսյանը 1991 թվականից, Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանը 1991 թվականից, Քրիստինե Սլավիկի Սարոյանը 2004 թվականից, Ալեքսան Սամվելի Հովհաննիսյանը 2011 թվականից, Հարություն Սամվելի Հովհաննիսյանը 2011 թվականից, բնակվում են՝ Մարիամ Մամիկոնի Հովհաննիսյանը և Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանը (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառման վերաբերյալ 2024 թվականի մարտի 18-ի թիվ 240168016167, 2024 թվականի մարտի 21-ի «Բարեկամություն» համատիրության N 0/36 տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացիներ՝ Հասմիկ Ալեքսանի Հակոբյանի, Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, վերոնշյալ քաղաքացիների կողմից 1998 թվականի մարտի 1-ից առ այսօր կնքված անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցում Հայաստանի Հանրապետությունում կատարված չէ (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի մարտի 20-ի N ԱՏ-20032024-99-0211, N ԱՏ-20032024-99-0532, 2024 թվականի մարտի 25-ի N ԱՏ-25032024-99-0376 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Տ.Ճարտարապետի փողոց 16ա շենք թիվ 1 հասցեի բնակարանը վարձակալել է 1991 թվականի հունիսի 2-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել

ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանգիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ թույլատրել Գյումրու քաղաքապետին՝ նվիրատվության կարգով սեփականաշնորհելու դիմում ներկայացրած այն վարձակալների բնակարանները, որոնք մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը իրենց կողմից վարձակալած բնակարանները սեփականաշնորհելու նպատակով դիմում չեն ներկայացրել, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո են վարձակալել բնակարաններ:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանի դիմումը բավարարեց:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Տ. Ճարտարապետի փողոց 16ա շենք, թիվ 1 հասցեի 79.18 (յոթանասունինները ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանին ծնված՝ 1975 թվականին

որպես սեփականություն :

3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանին:
4. Քաղաքացի՝ Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունմանմասին՝տրամադրելովսույնորոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Սամվել Ալեքսանի Հովհաննիսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատականկարգովվարչականակտըուժիմեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«03» հունվարի 2024 **թվական** N 1637-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Նարինե Հովհաննեսի Սարգսյանը (անձնագիր՝ AT 0305836, տրված՝ 016-ի կողմից 14.11.2019թ., հաշվառված՝ ք. Գյումրի,Մ.Ավետիսյան փողոց 23 շենք 25 հասցեում), (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի մարտի 19-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին՝ խնդրելով Գյումրի համայնքի Մ.Ավետիսյան փողոց 23 շենք թիվ 25 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել իր ընտանիքին որպես ընդհանուր բաժնային սեփականություն:

Կումայրիի Շիրակի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 26-ի թիվ 10 որոշմամբ Մ.Ավետիսյան փողոց 23 շենք թիվ 25 բնակարանը հատկացվել է Մարիետա Բաղդասարի Բաղդասարյանի (Մուրազյան) հինգ անձից բաղկացած ընտանիքին ՝ իրեն, 3 տղային, հարսին:

Դիմումին կից ներկայացվել է Շիրակի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 26-ի թիվ 10 որոշմամբ տրված թիվ 25 միասնական օրդերը, բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վեցրաբեևյալ 2024 թվականի մարտի 14-ի թիվ 2401680161542024 տեղեկանքը, «Նոր Անի» համատիրության 2024 թվականի մարտի 18-ի տեղեկանքը, Բաբկեն Վաչագանի Սարգսյանի, Նարինե Հովհաննեսի Սարգսյանի, Մարիետա Բաղդասարի Մուրազյանի, Ռուբիկ Սաշայի Մուրազյանի, Մելիք Սաշայի Մուրազյանի անձնագրերի պատճենները, Բաբկեն Վաչագանի Սարգսյանի, Մարիետա Բաղդասարի Մուրազյանի, Ռուբիկ Սաշայի Մուրազյանի, Մելիք Սաշայի Մուրազյանի հայտարարությունները Գյումրի համանքից Մ.Ավետիսյան փողոց 23 շենք թիվ 25 հասցեի բնակարանից հրաժարվելու վերաբերյալ:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2- րդ մասի,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով 2024 թվականի մարտի 19-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի Նարինե Հովհաննեսի Սարգսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Գյումրի համայնքի Մ. Ավետիսյան 23 շենք թիվ 25 հասցեի 83.45 (ութսուներեք ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով պատկանում է Գյումրի համայնքին (հիմք՝ 1377043 վկայական):

բ) Գյումրի քաղաքի Մինաս Ավետիսյան փողոց 23 շենքի թիվ 25 բնակարանը 1991 թվականից հանձնված է բնակության (հիմք՝ Կումայրիի Շիրակի շրջխորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի հունիսի 26-ի թիվ 10 որոշմամբ տրված թիվ 25 միասնական օրդեր):

գ) Շիրակ Գյումրի Մ.Ավետիսյան փողոց 23 շենք 25 հասցեում հաշվառված բնակվում են՝ Բաբկեն Վաչագանի Սարգսյանը 1991 թվականից, Նարինե Հովհաննեսի Սարգսյանը 1991 թվականից, Արսեն Բաբկենի Սարգսյանը 2014 թվականից (հիմք՝ բնակչության պետական ռեգիստրում առկա կոնկրետ հասցեում հաշվառված անձանց վերաբերյալ 2024 թվականի մարտի 14-ի թիվ 240168016154 և «Նոր Անի» համատիրության 2024 թվականի մարտի 18-ի տեղեկանքներ):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ ՀՀ տարածքում քաղաքացիներ Մարիետա Բաղդասարի Մուրազյանի, Նարինե Հովհաննեսի Սարգսյանի, Բաբկեն Վաչագանի Սարգսյանի, Ռուբիկ Սաշայի Մուրազյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացիների կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման կամ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Մելիք Սաշայի Մուրազյանի անվամբ մարզ Շիրակ համայնք Գյումրի ք. Լ.Մադոյան փողոց 55 շենք 10 բնակարանի նկատմամբ գրանցված է սեփականության իրավունք, 1998թ.մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարվել է մարզ Շիրակ համայնք Գյումրի ք. Լ.Մադոյան փողոց 55 շենք 10 բնակարանի նկատմամբ, իսկ օտարման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ (հիմք՝ 2024 թվականի մարտի 13-ի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ N US-13032024-99-0141, N US-13032024-99-0136, N US-13032024-99-0213, N US-13032024-99-0211, N US-13032024-99-0346 տեղեկանքներ):

ե) Քաղաքացի Նարինե Հովհաննեսի Սարգսյանի ընտանիքը Գյումրի քաղաքի Մ. Ավետիսյան 23 շենք թիվ 25 հասցեի բնակարանը վարձակալել է 1991 թվականի հունիսի 26-ից, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի -ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամհամայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 163-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Համաձայն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին կետի՝ մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը վարձակալած բնակարանի սեփականաշնորհման մասին դիմում ներկայացրած չլինելու, ինչպես նաև 1998 թվականի դեկտեմբերի 31-ից հետո վարձակալ հանդիսանալու պայմաններին բավարարում է:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, անհրաժեշտ է քաղաքացի Նարինե Հովհաննեսի Սարգսյանի դիմումը բավարարել:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ,24-րդ կետերի,

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գյումրի համայնքի Մ. Ավետիսյան 23 շենք թիվ 25 հասցեի 83.45 (ութսուներեք ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

   1) Նարինե Հովհաննեսի Սարգսյանին ծնված՝ 1972 թվականին

   որպես սեփականություն :
2. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի Նարինե Հովհաննեսի Սարգսյանին :
3. Քաղաքացի՝ Նարինե Հովհաննեսի Սարգսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Նարինե Հովհաննեսի Սարգսյանին պատշաճ կարգով իրազեկման օրվան հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«03» հունիսի 2024 **թվական** N 1636-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔԸ ՔԱՂԱՔԱՑԻ ԷԴՎԱՐԴ ԱԼԲԵՐՏԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Արտավազդ Գրիգորի Պողոսյանը (նույնականացման քարտ՝ 010456200 տրված՝ 31.07.2019թ. 064-ի կողմից, հաշվառված՝ ք.Գյումրի Խր. Հայրիկ փող. 40 շենք 16 հասցեում), որը լիազորագրով հանդես է գալիս Էդվարդ Ալբերտի Պողոսյանի անունից (այսուհետ նաև՝ վարչական ակտի հասցեատեր), 2024 թվականի ապրիլի 1-ին դիմում է ներկայացրել Գյումրի համայնքի ղեկավարին խնդրելով ՝Գյումրի համայնքի Ս.Մատնիշյան փող. 53 շենք թիվ 6 հասցեի բնակարանը նվիրատվության եղանակով օտարել Էդվարդ Ալբերտի Պողոսյանին որպես սեփականություն:

Դիմումին կից ներկայացվել է ՝«Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 13 -ի Շ-740 գրությունը, 2024 թվականի ապրիլի 3-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի N 94/20-761 գրությունը, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2024 թվականի ապրիլի 1-ի տեղեկանքը, Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2022 թվականի դեկտեմբերի 23-ի եզրակացությունը , «ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի փետրվարի 7-ի տեղեկանքը, Էդվարդ Ալբերտի Պողոսյանի լիազորագիրը Գյումրի հանայնքից ք. Գյումրի Սուրեն Մատնիշյան փողոց 53 շենք թիվ 6 հասցեի բնակարանի սեփականության իրավունքի ընդունման պատրաստակամության մասին :

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու ավագանու 2009 թվականի նոյեմբերի 26-ի N46-Ա որոշման 1-ին և 2-րդ կետերի դրույթներով՝ 2024 թվականի ապրիլի 1-ին հարուցվել է վարչական վարույթ:

Լսումների օր է նշանակվել 2024 թվականի մայիսի 29-ը, դիմումատուն պատշաճ կարգով ծանուցվել է լսումների օրվա, ժամի և վայրի մասին:

Լսումներն իրականացվել են քաղաքացի՝ Էդվարդ Ալբերտի Պողոսյանի լիազորված անձ՝ Արտավազդ Գրիգորի Պողոսյանի մասնակցությամբ, նրան բացատրվել են օրենքով իրեն վերապահված իրավունքները:

2. ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.

ա) Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ս.Մատնիշյան փողոց 53 շենք, թիվ 6 հասցեի 54.18 (հիսունչորս ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով գրանցված է Գյումրի համայնքի անվամբ (հիմք՝ N 03102023-08-0013 վկայական):

բ) Լենինականի Մատնիշյան փողոց 53 շենք (կառուցված 1951թ.) թիվ 6 բնակարանի բաշխման և հատկացման հիմքերի վերաբերյալ տվյալներ չեն հայտնաբերվել (հիմք՝ «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ Շիրակի մարզային մասնաճյուղի 2023 թվականի մարտի 13 - ի Շ-740 գրություն):

գ) Ք. Գյումրի Մատնիշյան փ. 53 շենք 6 հասցեում հաշվառված բնակվում է Էդվարդ Ալբերտի Պողոսյանը 1993 թվականից, (հիմք՝ 2024 թվականի ապրիլի 3-ի Գյումրի քաղաքի Կումայրիի անձնագրային բաժանմունքի N 94/20-761 գրություն, «Գյումրու Բնակարանների Սպասարկում» ՓԲԸ-ի 2024 թվականի ապրիլի 1-ի տեղեկանք):

դ) Բնակելի տան, կամ բնակարանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում քաղաքացի՝ Էդվարդ Ալբերտի Պողոսյանի անվամբ որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ, 1998թ. մարտի 1-ից առ այսօր վերոնշյալ քաղաքացու կողմից ՀՀ տարածքում անշարժ գույքի օտարման կամ ձեռքբերման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցում կատարված չէ, (հիմք՝ ՀՀ կադաստրի կոմիտեի գույքային իրավունքների առկայության և կազմի վերաբերյալ 2024 թվականի մարտի 27-ի N ԱՏ-27032024-99-0120 տեղեկանք):

ե) ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ս.Մատնիշյան փողոց 53 շենքի վնասվածությունը գնահատվում է երկրորդ աստիճանի, տեխնիկական վիճակը՝ բավարար, այն է՝ պահանջվում է կատարել շենքի հարդարանքի նորոգում՝ վնասված տարրերի վերականգնումով (հիմք՝ Մուրադ Տիգրանյան անհատական ձեռնարկության 2022 թվականի դեկտեմբերի 23-ի եզրակացություն):

զ) Քաղաքացի Էդվարդ Պողոսյանը /ք. Գյումրի, Ս.Մատնիշյան փողոց 53 շենք, 6 բն./ Գյումրի ցանցում բաժանորդ է 2002 թվականից միչև օրս (հիմք՝«ՀՀ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Ղարս» մասնաճյուղի «Գյումրի» ցանցի 2023 թվականի փետրվարի 7-ի տեղեկանք):

2. Իրավական վերլուծություն և եզրահանգում.

Համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 128-րդ հոդվածի 1-ին մասի՝ համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ ու այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերություններ մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով:

Համաձայն օրենսգրքի 129-րդ հոդվածի 2-րդ մասի՝ համայնքների անունից իրենց գործողություններով կարող են գույքային իրավունքներ և պարտականություններ ձեռք բերել ու իրականացնել տեղական ինքնակառավարման մարմինները՝ իրենց իրավասության շրջանակներում:

Համաձայն օրենսգրքի 166-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կամ համայնքների սեփականության ներքո, գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները՝ կապված գույքը քաղաքացու կամ իրավաբանական

անձի, Հայաստանի Հանրապետության կամ համայնքի սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

Համաձայն օրենսգրքի 169-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է, համայնքի անունից սեփականատիրոջ իրավունքներն իրականացնում են համայնքի ավագանին և (կամ) համայնքի ղեկավարը:

Համաձայն օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասի՝ սեփականատերն իրավունք ունի իրեն պատկանող գույքի նկատմամբ, իր հայեցողությամբ, կատարել օրենքին չհակասող և այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող ցանկացած գործողություն, այդ թվում՝ իր գույքը որպես սեփականություն օտարել այլ անձանց, նրանց փոխանցել այդ գույքի օգտագործման, տիրապետման և տնօրինման իրավունքները:

Համաձայն օրենսգրքի 172-րդ հոդվածի՝ սեփականատեր ունեցող գույքի նկատմամբ դրա առուվաճառքի, փոխանակության, նվիրատվության պայմանագրի կամ գույքի օտարման այլ գործարքի հիման վրա սեփականության իրավունք կարող է ձեռք բերել այլ անձը:

Համաձայն օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասի՝ նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք:

Համաձայն օրենսգրքի 595-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի և 596-րդ հոդվածի՝ նվիրատվության պայմանագիրը կնքվում է գրավոր, անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով սեփականության իրավունքի փոխանցումը ենթակա է պետական գրանցման:

Համաձայն օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործարքի նոտարական ձևը չպահպանելը հանգեցնում է գործարքի անվավերության: Նման գործարքն առոչինչ է:

Համաձայն օրենսգրքի 301-րդ հոդվածի 1-ին մասի՝ անշարժ գույքի հետ կատարվող գործարքներից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի1-ին մասի 16-րդ կետի՝ համայնքի ղեկավարը համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարում կամ օգտագործման է տրամադրում համայնքի սեփականություն հանդիսացող գույքը:

Նշված իրավանորմերի տիրույթում հաշվի առնելով այն դիրքորոշումը, որ դրսևորվում է Գյումրու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ կապված Գյումրու բնակչության բնակապահովման հարցի հետ և առաջնորդվելով բնակչության բարեկեցության բարելավմանն ուղղված տեղական ինքնակառավարման մարմինների նպատակներով և վարչարարության իրականացման համաչափության սկզբունքներով, վարչական մարմինը քաղաքացի Էդվարդ Ալբերտի Պողոսյանի լիազորված անձ՝ Արտավազդ Գրիգորի Պողոսյանի դիմումը բավարարեց:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ, 24-րդ կետերի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ, 4-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 53-60-րդ հոդվածների դրույթներով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Չեղյալ ճանաչել Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի նոյեմբերի 20-ի N 2910 որոշումը:
2. Մարզ Շիրակ, համայնք Գյումրի ք. Ս.Մատնիշյան փողոց 53 շենք, թիվ 6 հասցեի 54.18 (հիսունչորս ամբողջ տասնութ հարյուրերորդական) քառակուսի մետր մ ակերեսով

բնակարանը նվիրատվության եղանակով օտարել քաղաքացի՝

1) Էդվարդ Ալբերտի Պողոսյանին ծնված 1976 թվականին

որպես սեփականություն:

3. Նվիրատվության պայմանագրի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման համար օրենքով նախատեսված ծախսերի ապահովումը վերապահել քաղաքացի՝ Էդվարդ Ալբերտի Պողոսյանին:
4. Քաղաքացի՝ Էդվարդ Ալբերտի Պողոսյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի՝ Էդվարդ Ալբերտի Պողոսյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով վարչական ակտը ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում:

Недействительная подпись

X

2024թ. Գյումրի համայնք **Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» Մայիսի 2024 թվականի N 1635Ա

«ՖԻՈՐԵԼԼԱ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱԳԻԿ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ 61 ՀԱՍՑԵՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Ֆիորելլա» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Սարգսյանի (ՀՎՀՀ՝ 05562448, գրանցման ամսաթիվը՝ 29.03.2024 թ.) 2024 թվականի մայիսի 24-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի մայիսի 24-ին 9093-2024 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Ֆիորելլա» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Սարգսյանին Գյումրի քաղաքի Մ. Խորենացի 61 հասցեում իրականացնել հանրային սննդի կազմակերպում և իրացում:
2. Թույլտվության գործողության վերջնաժամկետ սահմանել մինչև 2024 թվականի հունիսի 30-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ֆիորելլա» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

31.05.2024

x _____

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» մայիսի 2024 **թվականի** N 1634 Ա

«ԷՔՍՊՐԵՍ ԳԱԶ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԲԱՐԵՂԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԳԱՐԵԳԻՆ Ա ՓՈՂՈՑ 117/1 ՀԱՍՑԵՈՒՄ ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 9-ի № 255-Ն որոշմամբ և հիմք ընդունելով «Էքսպրես գազ» ՍՊԸ-ի տնօրեն Բարեղամ Գրիգորյանի (ՀՎՀՀ՝ 04228115, գրանցման ամսաթիվը՝ 25.01.2016 թ.) 2024 թվականի փետրվարի 15-ին ներկայացրած հայտը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի փետրվարի 15-ին 2981-2024 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Թույլատրել «Էքսպրես գազ» ՍՊԸ-ի տնօրեն Բարեղամ Գրիգորյանի Գյումրի քաղաքի Գարեգին Ա փողոց 117/1 հասցեում իրականացնել սեղմված բնական գազի վաճառք:
2. Թույլտվության գործողության ժամկետ սահմանել մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Էքսպրես գազ» ՍՊԸ-ի տնօրեն Բարեղամ Գրիգորյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

31.05.2024

Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. մ. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<<31>> Մայիսի 2024 թվականի N 1633-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍՈՆԱ ՍԱՄՎԵԼԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՐԱԽՈՒՍԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իր աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար Գյումրի համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար Սոնա Սամվելի Առաքելյանի նկատմամբ կիրառել խրախուսանք՝ միանվագ դրամական պարգևատրման տեսքով՝ մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով:

2. Գյումրու համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ վճարումը կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սոնա Սամվելի Առաքելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.05.2024

x _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«31» Մայիս 2024 թվականի N 1632 -Ա

ԻՐԻՆԱ ԷԴՈՒԱՐԴԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ՀԵՆԶԵԼ ԵՎ ԳՐԵՏԵԼ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ, 59-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով և հիմք ընդունելով Իրինա Էդուարդի Խաչատրյանի 2024 թվականի մայիսի 29-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Իրինա Էդուարդի Խաչատրյանին (ծնված՝ 1983 թվականի հոկտեմբերի 8-ին, անձնագիր՝ N AU0353070, տրված՝ 2021 թվականի հուլիսի 13-ին՝ ՀՀ ոստիկանության 016-ի կողմից, հաշվառման հասցե՝ քաղաք Գյումրի, Չարենցի փող., շ.10, բն.16, հանրային ծառայությունների համարանիշ՝ N 5810830048) 2024 թվականի հունիսի 3-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Հենզել և Գրետել-մսուր մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր:
2. Աշխատավարձը սահմանել համաձայն պաշտոնային դրույքաչափի:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Իրինա Էդուարդի Խաչատրյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.05.2024

Հ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<<31>> Հոկտեմբեր 2024 թվականի N 1631-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԱՆՈՒԼԻԿ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՄԱՐԻԱՆԱ ԳԵՎՈՐԳԻ ՂԱՐԱՔԵՇԻՇՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 160-րդ հոդվածով, 163-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ հաստատված ցանկի 1-ին կետով և հիմք ընդունելով Մարիանա Գևորգի Ղարաքեշիշյանի 2024 թվականի մայիսի 29-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Անուլիկ –մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարիանա Գևորգի Ղարաքեշիշյանին տրամադրել 2024 թվականի աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 2024 թվականի հունիսի 4-ից:

2. Ամենամյա երկարացված արձակուրդի մասը՝ 10 աշխատանքային օր՝ 2024 թվականի հունիսի 4-ից 17-ը ներառյալ:

3. Ամենամյա երկարացված արձակուրդի ընթացքում Մարիանա Գևորգի Ղարաքեշիշյանի աշխատանքային պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մեթոդիստ Նաիրա Սեյրանի Դանիելյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մարիանա Գևորգի Ղարաքեշիշյանին և Նաիրա Սեյրանի Դանիելյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.05.2024

x _____ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<<30>> մայիսի 2024 թվականի N 1630 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ՀԵՆԶԵԼ ԵՎ ԳՐԵՏԵԼ-ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԿԱՐԻՆԵ ՓԱՅԼԱԿԻ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետով, << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<ա>> կետով և հիմք ընդունելով Կարինե Փայլակի Մելիքյանի 2024 թվականի մայիսի 13-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Հենզել և Գրետել-մսուր մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Փայլակի Մելիքյանին ազատել զբաղեցրած պաշտոնից 2024 թվականի հունիսի 3-ից՝ լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2.Կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կարինե Փայլակի Մելիքյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.05.2024

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 30 >> Մայիսի 2024 թվականի N 1629 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ << ԱՐԵՎԻԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 59-րդ հոդվածի 1-ի մասի 5-րդ կետով, << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի <<ա>> կետով և հիմք ընդունելով Գայանե Գևորգի Մանուկյանի 2024 թվականի մայիսի 13-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Արևիկ մանկապարտեզ >> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Գևորգի Մանուկյանին ազատել զբաղեցրած պաշտոնից 2024 թվականի հունիսի 3-ից՝ լուծելով նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2.Կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Գայանե Գևորգի Մանուկյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.05.2024

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2024 թվականի № 1628Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ,Պ. ՍԵՎԱԿԻ ՓՈՂՈՑ, 1 ՇԵՆՔ, 8Ա ԲՆԱԿԱՐԱՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2419084) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Արշակ Ասատրյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №9189 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք,Պ. Սևակի փողոց, 1 շենք, 8ա բնակարան հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2419084) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Պ. Սևակի փողոց, 1 շենք, 8/1 բնակարան

30.05.2024

Կ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» Հոկտեմբեր 2024 թվականի №1627Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ՌԻԺԿՈՎԻ ՓՈՂՈՑ, 2 ՇԵՆՔ, 1/1 ՀԱՍՑԵԻ ԽԱՆՈՒԹԻՆ ԿԻՑ 29.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԴՐԱ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 29.9 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԻՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՒՅՔ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 27-ի №1571–Ա որոշումը, հողամասի ու շինությունների հատակագծերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Ռիժկովի փողոց, 2 շենք, 1/1 հասցեի խանութին կից 29.9 քառակուսի մետր մակերեսով հողամասին և դրա վրա ինքնակամ կառուցված 29.9 քառակուսի մետր արտաքին մակերեսով հասարակական շինությանը տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Ն. Ռիժկովի փողոց, 2/14 շինություն

Недействительная подпись

Հ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2024 թվականի №1626 Ա

ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԱԹՈՅԱՆ ՓՈՂՈՑ, 3 ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ (ՎԿԱՅԱԿԱՆ №2839100) ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով և հիմք ընդունելով քաղաքացի Բագրատունի Ենգոյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված №8983 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Գյումրի քաղաք, Աթոյան փողոց, 3 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №2839100) վերահասցեավորել՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Հ. Աթոյան փողոց, 1/1 բնակելի տուն

Х

Վ. ԱԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» Դեկտեմբեր 2024 թվականի № 1625-Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԷԴԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ, ԳՈՀԱՐԻԿ ՄԽԻԹԱՐՅԱՆԻՆ, ԳՈՌ ԵՎ ԱՐԱՔՍԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆՆԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔ, ԿԱԶԱՉԻ ՊՈՍՏ 11 ԴՈՍ 13Ա ՀԱՍՑԵԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՇՎԱՌԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԵՎ ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ 86.0 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ (ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳԻՐ 08-001-1027-0297) ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով և հիմք ընդունելով Գյումրի համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 10-ի №1414–Ա որոշումը, չափագրման արտոնագիր ունեցող «Ս ՖՈՌՄԱՏ ՍԹԱՅԼ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հողամասի, շինության հատակագծերը ու քաղաքացի Էդիկ Վարդանյանի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված № 8902 թվագրմամբ)՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Քաղաքացիներ Էդիկ Վարդանյանին, Գոհարիկ Մխիթարյանին, Գոռ և Արաքսի Կիրակոսյաններին պատկանող Գյումրի քաղաք, Կազաչի պոստ 11 դոս 13ա հասցեագրությամբ հաշվառած բնակելի տանը և դրա զբաղեցրած 86.0 քառակուսի մետր մակերեսով հողամասին (կադաստրային ծածկագիր 08-001-1027-0297) տրամադրել հասցե՝

ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի ք., Խ. Ավետիսյան փողոց, 19/1 բնակելի տուն

Անհետաձգելի գործ

Հ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» Նոյեմբեր 2024 թվականի № 1624-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի №2514-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդհոդվածի 1-ին մասի 24-րդկետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի հոկտեմբերի 11-ի «Գյումրի քաղաք, Մերկուրովի փողոց, 33 բնակելի տուն հասցեագրությամբ անշարժ գույքը (վկայական №17082023-08-0046) երկու մասերի բաժանելու նպատակով նոր հասցեներ տրամադրելու մասին» №2514-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. որոշման կայացման մեջ «139.36», «218.6» թվերը փոխարինել համապատասխանաբար «134.66», «223.30» թվերով:

Հ. ՍԱՄՍՈՆՅԱՆ

2024 թ. ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

«30» մայիսի 2024 **թվականի** N 1623-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 3253-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասի 7-րդ փողոցի N 17 հասցեի հողամասին կից 123.73 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 70.0 քառակուսի մետր արտաքին 60.71 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 3253-Ա որոշման մեջ լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջացել, որոշման մեջ տեղ գտած բացթողնման պատճառով:

Նկատի ունենալով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածի 1-ին մասով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի 2023 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անի թաղամասի 7-րդ փողոցի N 17 հասցեի հողամասին կից 123.73 քառակուսի մետր մակերեսով հողամասը և նրա վրա ինքնակամ կառուցված 70.0 քառակուսի մետր արտաքին 60.71 քառակուսի մետր ներքին մակերեսով ավտոտնակն օրինական ճանաչելու և համայնքային սեփականություն համարելու մասին» N 3253-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
   1) Որոշման մեջ լրացնել նոր կետ հետևյալ խմբագրությամբ.
      «5. Գյումրի քաղաքի Անի թաղամասի 7-րդ փողոցի N 17 հասցեի հողամասին կից 123.73 (մեկ հարյուր քսաներեք ամբողջ յոթանասուներեք հարյուրերորդական) քառակուսի մետր մակերեսով համայնքապատկան հողամասում 2023 թվականին ինքնակամ կառուցված թիվ 2 համարակալմամբ հարթակը թողնել ինքնակամ»:

X

Լ. ՍԱՆՈՆՅԱՆ
(փոխարինող)

2024թ. ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» Մայիսի 2024 թվականի N 1622-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ՋԵՅՐԱՆ ՏԻԳՐԱՆԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ 2 ԹԱՂԱՄԱՍ 4/40 ՇԵՆՔ 32 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՅԻ՝ ՀՈՎՍԵՓ ՍՏԱՆԻՍԼԱՎԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի մայիսի 21-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Ջեյրան Տիգրանի Կիրակոսյանը (անձնագիր՝ AS0629365, տրված՝ 30.05.2019 թվականին 016-ի կողմից)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 20.08.2008 թվականին ծնված Հովսեփ Ստանիսլավի Խաչատրյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №260707) Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 4/40 շենք 32 բնակարանի մասնաբաժինը:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատեր է հանդիսանում նաև անչափահաս՝ Հովսեփ Ստանիսլավի Խաչատրյանը (հիմք՝ 21.11.2012 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21112012-08-0247):

Նիստին ներկա գտնվող անչափահասի մայրը՝ Ջեյրան Տիգրանի Կիրակոսյանը և հայրը՝ Ստանիսլավ Արտուշի Խաչատրյանը ներկայացրել են պարտավորագրեր, որոնցով իրենց անչափահաս որդուն՝ Հովսեփ Ստանիսլավի Խաչատրյանին պատկանող մասը վաճառելուց հետո պարտավորվում են ապահովել բնակարանային սեփականության իրավունքը, իր ունեցած մասնաբաժնից ոչ պակաս (հիմք՝ պարտավորագրեր, տրված՝ 17.05.2024 թվականին ՀՀ «Շիրակի մարզ» նոտարական տարածքի նոտար՝ Ռ.Մուկուչյանի կողմից, գրանցված է գրանցամատյանում թիվ 3259 և թիվ 3261):

Անչափահասի հայրը՝ Ստանիսլավ Արտուշի Խաչատրյանը հայտնեց, որ ինքը հանդիսանում է սեփականատեր Գյումրի քաղաքի Ա.Խաչատրյան փողոց 19 շենք 2 բնակարանի (հիմք՝ 04.02.2009 թվականի վկայական անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 2432330):

Ջեյրան Տիգրանի Կիրակոսյանը հայտնեց նաև, որ բնակարանի վաճառքը նպաստելու է ավելի մեծ մակերեսով նոր բնակարանի ձեռքբերմանը:

Նիստին ներկա գտնվող անչափահաս՝ Հովսեփ Ստանիսլավի Խաչատրյանը տվել է համաձայնություն իր մասնաբաժինը վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդված 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Ջեյրան

Տիգրանի Կիրակոսյանի 2024 թվականի մայիսի 21-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 8838 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 29-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Ջեյրան Տիգրանի Կիրակոսյանին (անձնագիր՝ AS0629365) վաճառելու իր անչափահաս երեխայի՝ 20.08.2008 թվականին ծնված Հովսեփ Ստանիսլավի Խաչատրյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №260707) Գյումրի քաղաքի Մուշ 2 թաղամաս 4/40 շենք 32 բնակարանի մասնաբաժինը, նոր բնակարան ձեռք բերելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ջեյրան Տիգրանի Կիրակոսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.05.2024

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«30» մայիսի 2024 թվականի N 162-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԿԱՏՅԱ ՍԱՄՎԵԼԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՄՈՒՇ-2 ԹԱՂԱՄԱՍ 9 ՓՈՂՈՑ 1 ՇԵՆՔ 21 ԲՆԱԿԱՐԱՆԻ ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ՝ ԷԼԼԱ ԷԴԳԱՐԻ ԱԴԱՄՅԱՆԻ ԵՎ ՍՏԵԼԼԱ ԷԴԳԱՐԻ ԱԴԱՄՅԱՆԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆՆԵՐԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024 թվականի մայիսի 23-ին Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին է դիմել քաղաքացի Կատյա Սամվելի Գալստյանը (նույնականացման քարտ՝ 008735128)՝ խնդրելով տալ համաձայնություն վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 22.11.2006 թվականին ծնված Էլլա Էդգարի Ադամյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №122655) և 22.11.2006 թվականին ծնված Ստելլա Էդգարի Ադամյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №122656) Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 9 փողոց 1 շենք 21 բնակարանի մասնաբաժինները:

Վերոնշյալ հասցեի բնակարանի համասեփականատերեր են հանդիսանում նաև անչափահասներ՝ Էլլա Էդգարի Ադամյանը և Ստելլա Էդգարի Ադամյանը (հիմք՝ 18.11.2015 թվականին գրանցված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 18112015-08-0005):

Նիստին ներկա գտնվող անչափահասների մայրը՝ Կատյա Սամվելի Գալստյանը հայտնեց, որ իր անչափահաս երեխաները՝ Էլլա Էդգարի Ադամյանը և Ստելլա Էդգարի Ադամյանը հանդիսանում են նվիրառուներ Հայաստանի Հանրապետություն, Մարզ Արագածոտն, համայնք Աշտարակ գյուղ Կոշ 6-րդ /վեցերորդ/ փողոց 3-րդ /երրորդ/ նրբանցք 1 /առաջին/ բնակելի տուն գտնվող անշարժ գույքի (հիմք՝ պայմանագիր անշարժ գույքի /բնակելի տուն/ նվիրատվության տրված՝ 22.05.2024 թվականին ՀՀ «ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ» նոտարական տարածքի նոտար՝ Ժ.Հրաչյանի կողմից, գրանցված է գրանցամատյանում՝ 2289-ով):

Նիստին ներկա գտնվող անչափահասների մայրը՝ Կատյա Սամվելի Գալստյանը և հայրը՝ Էդգար Գրիշայի Ադամյանը հայտնեցին, որ իրենց ընտանիքը բնակվում է Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Կոշ գյուղի 1 փողոց 81 բնակելի տանը և բնակարանի վաճառքը նպաստելու է բնակարանային պայմանների բարելավմանը (հիմք՝ տեղեկանք ընտանիքի կազմի մասին N 4645, տրված՝ 27.05.2024 թվականին Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակի համայնքապետարանի կողմից):

Նիստին ներկա գտնվող անչափահասներ՝ Էլլա Էդգարի Ադամյանը և Ստելլա Էդգարի Ադամյանը տվել են համաձայնություն իրենց մասնաբաժինները վաճառելու վերաբերյալ:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի

Հանրապետության 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով քաղաքացի Կատյա Սամվելի Գալստյանի 2024 թվականի մայիսի 23-ի դիմումը (համայնքապետարանում մուտքագրված թիվ 9033 թվագրությամբ) և Գյումրի համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 29-ի նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Համաձայնություն տալ Կատյա Սամվելի Գալստյանին (նույնականացման քարտ՝ 008735128) վաճառելու իր անչափահաս երեխաների՝ 22.11.2006 թվականին ծնված Էլլա Էդգարի Ադամյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №122655) և 22.11.2006 թվականին ծնված Ստելլա Էդգարի Ադամյանի (ծննդյան վկայական՝ ԱԱ №122656) Գյումրի քաղաքի Մուշ-2 թաղամաս 9 փողոց 1 շենք 21 բնակարանի մասնաբաժինները, բնակարանային պայմանները բարելավելու կապակցությամբ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կատյա Սամվելի Գալստյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

30.05.2024

x

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 30 >> մայիսի 2024 թվականի N 1620 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի N N 1493-Ա , 1492-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՉԵՂՅԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> օրենքի 38.1.-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Չեղյալ ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալի 2024 թվականի մայիսի 21-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Հենզել և Գրետել-մսուր մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Կարինե Փայլակի Մելիքյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին >> N 1492-Ա , << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի << Արևիկ մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գայանե Գևորգի Մանուկյանին զբաղեցրած պաշտոնից ազատելու մասին >> N 1493-Ա որոշումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

30.05.2024

Ա. Սամսոնյան

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am

ՈՐՈՇՈՒՄ

<< 29 >> Մայիսի 2024 թվականի N 1619 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ ԼՈՒՍԻՆԵ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՆՈՅԱՆԻՆ ՉՎՃԱՐՎՈՂ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Լուսինե Ռուբենի Սանոյանի 2024 թվականի մայիսի 29-ի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Լուսինե Ռուբենի Սանոյանին տրամադրել 2 օր չվճարվող արձակուրդ՝ 2024 թվականի մայիսի 30-ից 31-ը ներառյալ:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված ժամանակահատվածում Լուսինե Ռուբենի Սանոյանին կփոխարինի Գյումրի համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Սեպուհի Ջանոյանը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լուսինե Ռուբենի Սանոյանին և Սուրեն Սեպուհի Ջանոյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

x

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ

ք.Գյումրի